



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան  
18 ապրիլի 2022թ.

ԲԴԽ-35-Ո-Կ-7

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԹՎԱՐԱՔԻ ԱՌԱՅԻՆ ԱՏՅԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
ԱՐՏՈՒՇ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՅԱՐՏԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝  
ՅԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Ճախագահությունը՝  
Քարձրագույն դատական խորհրդի  
Ճախագահի պաշտոնակատար

Գ. Զհանգիրյանի,

մասնակցությունը՝  
անդամներ

- Գ. Բեքմեզյանի,
- Դ. Խաչատրյանի,
- Մ. Մակյանի,
- Լ. Մելիքջանյանի,
- Ա. Մխիթարյանի,
- Ս. Չիչոյանի,
- Վ. Քոչարյանի,

Վրդարադատության ճախարարի  
Տեղակալ

Գ. Մինասյանի,

Վրդարադատության ճախարարի  
Անդամագույցիչ

- Գ. Հարությունյանի,
- Դ. Սանոյանի,

Երևան քաղաքի առաջին ասյանի  
ընդհանուր իրավասության դատարանի  
դատավոր

Ա. Գաբրիելյանի,

քարտուղարությունը՝

Ա. Շիրաջյանի

դոճբաց նիստում, բննության առնելով Արդարադատության նախարարի՝ «Երևան քաղաքի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արսուշ Գաբրիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2022 թվականի մարտի 10-ի թիվ 23-Վ որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը,

## **Պ Ա Բ Ձ Ե Ց .**

### **1.Գործի նախապատմությունը.**

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Գլխավոր դատախազի պաշտոնակատար Գևորգ Բաղդասարյանի կողմից 06.09.2021 թվականին Արդարադատության նախարարին (այսուհետև՝ նախարար) ներկայացված Երևան քաղաքի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետև՝ դատարան) դատավոր Արսուշ Գաբրիելյանի (այսուհետև՝ դատավոր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումը:

Նախարարի 11.01.2022 թվականի որոշմամբ դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 10.03.2022 թվականի մարտի 10-ի թիվ 23-Վ որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

### **2.Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.**

Նախարարը, վկայակոչելով Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, նույն հոդվածի 5-րդ մասը, Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ նաև Օրենսգրք) 134-րդ հոդվածի 1-ին մասը, 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, նշել է, որ դատարանը, բննության առնելով մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, որոշել է մերժել այն՝ վերջինիս վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայության պատճառաբանությամբ, սխալ է մեկնաբանել Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածը (մեկնաբանել և գնահատել է մինչև 14.12.2019 թվականը գործող խմբագրությամբ)՝ հանգելով ոչ իրավաչափ եզրահանգման Քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի «հիմնավոր կասկածի» բացակայության վերաբերյալ, և արդյունքում չի բնորոշել կալանավորման հիմքերի առկայության հարցը:

Նախարարը միջնորդությամբ նշել է, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմքում դրվել են Գլխավոր դատախազի պաշտոնակատարի հաղորդմամբ և կից նյութերով ներկայացված գործի հանգամանքները և փաստական Տվյալները, դրանց համադրված վերլուծության արդյունքները, իսկ դատախազի զեկուցագիրը և/կամ Վերաբննիչ դատարանի որոշմամբ դատարանի կայացրած ակտի բեկանման փաստը առանձին-առանձին չեն դիտարկվել և ինքնին չեն գնահատվել որպես կարգապահական վարույթ հարուցելու և այժմ կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հիմք:

Միաժամանակ Նախարարը նշել է, որ.

«Ինչ վերաբերում է Դասավորի այն պնդմանը, որ արարող Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով որակելիս անհրաժեշտ է հաստատել հոդվածի 1-ին մասի առկայությունը՝ հարկ է վաստել, որ Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի՝ մինչև 14.12.2019 թվականը գործող խմբագրության պայմաններում նման դատությունն իրավաչափ կլիներ, սակայն նման մոտեցումը չի բխում գործող Քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ կազմված 177-րդ հոդվածի ոչ բովանդակությունից և ոչ էլ կառուցվածքից, քանզի, ինչպես վերը նշվեց գործության հիմնական հանցակազմը սրված է հոդվածի 5-րդ մասում և ոչ թե՛ 1-ին, իսկ հոդվածի 2-րդ մասում բացակայում է հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմին հղում կատարելու, այն վկայակոչելու հանգամանքը, ինչպես օրինակ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածում (խուլիզանությունը), երբ հոդվածի 1-ին մասում սահմանվում է խուլիզանության հիմնական հանցակազմը, 2-րդ մասում նշվում է՝ «Նույն արարող, որը զուգորդվել...», 3-րդ մասում նշվում է «Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարող, որը...», իսկ 4-րդ մասում՝ «Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարող, որը...»:

Վերոգրյալ հիմնավորումների շրջանակում անհիմն են Դասավորի այն պնդումները, թե ինքն ամեն դեպքում վերլուծությունները կատարել է ոչ թե նախկին խմբագրությամբ Քրեական օրենսգրքի վկայակոչմամբ, այլ՝ գործող, և այն, որ արարող Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով որակելիս անհրաժեշտ է հաստատել հոդվածի 1-ին մասի առկայությունը:

(...) Դասավորն առանց իրավաչափ նախադրյալների, գործի հանգամանքները դիտարկելով [վճռաբեկ դատարանի 22.06.2017 թվականի թիվ ԵՎԿԴ/0017/06/16 որոշմամբ](#) արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, անդրադարձ չի կատարել խափանման միջոց կիրառելու հիմքերին, այնինչ, եթե Դասավորն առաջնորդվեր Քրեական օրենսգրքի գործող խմբագրությամբ և Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի հարցը թնայնապես հիմնավոր կասկածի առկայության հանգամանքը դիտարկեր Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի գործող խմբագրության շրջանակներում, ապա չէր կարող անդրադարձ չկատարել խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա ժամանակ ընտրելու հարցին, պարտավոր կլիներ թնայնապես կալանավորման հիմքերի առկայության հարցը:

(...) Երկայացված հիմքերով և հիմնավորումներով հաստատվում է Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների խախտման հակահիշտության առկայությունը, այն, որ Դատարանի եզրահանգումները չեն բխում գործող օրենսդրության իրավակարգավորումներից, կամ վերաբերելի և կիրառելի նախադեպային իրավունքի մեկնաբանություններից, Դասավորի գործողությունները չեն ներառվում Օրենքի 142-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված կարգապահական պատասխանատվությունը բացառող հանգամանքի տիրույթում, որպիսի պայմաններում հաստատվում է Օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությունը, միաժամանակ բացակայում է Օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ կարգապահական վարույթը կարճելու հիմքը»:

Ելնելով վերոնշյալից Նախարարը նշել է, որ Դատավորը թույլ է սվել Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված պահանջների խախտում:

**3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ .**

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում Դատավորը Արդարադատության նախարարին ներկայացրել է բացատրություն և պատասխան՝ Բարձրագույն դատական խորհրդին, որով հայտնել է.

«(...) Սույն կարգապահական վարույթը հարուցելու մասին Նախարարի հմ.5-Վ որոշման առիթ հանդիսացած՝ ՀՀ Գլխավոր դատախազի պաշտոնակատար՝ Գ.Բաղդասարյանի «հաղորդումն» իրենից ներկայացրել է ուղեկցական գրություն, որով Նախարարի քննարկմանն է ուղարկվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ՝ Պ.Մարտիրոսյանի զեկուցագիրը: Իր հերթին Նախարարի հմ.5-Վ որոշումն իրենից ներկայացրել է վկայակոչված զեկուցագրից մեջբերումներ, որոնց վերաբերյալ ամբողջական պատասխան տալու համար դատավորն իր բացատրությամբ նշել է, որ. *«Ուսումնասիրելով Նախարարի կողմից կայացված որոշմանը կից ներկայացված նյութերը, պարզեցի որ կարգապահական վարույթ հարուցելու առիթի հիմքում դրվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ՝ Պ.Մարտիրոսյանի (այսուհետ՝ նաև Դատախազ) զեկուցագիրը, որի շուրջ էլ ըստ էության պետք է կառուցվի սույն բացատրությունը»:* Այնինչ, Նախարարի կողմից դիտարկությամբ, թե անփութությամբ սվյալ պարբերությունը ոչ ճիշտ ընկալվելու և մեկնաբանվելու արդյունքում հմ.23-Վ որոշման 3-րդ կետով արձանագրվել է, որ դատավորն իր բացատրությամբ ուղղակիորեն անդրադարձ չի կատարել կարգապահական վարույթ հարուցելու որոշմամբ ներկայացված հիմքերին և հիմնավորումներին և փորձ չի արել հերթել դրանք կամ ներկայացնել հակադասարկներ, որոնք էլ հնարավոր կլինեին դիտարկել ներկայացված միջնորդության համատեքստում: (...)

Բացի այդ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախարարի կողմից կայացված հմ. 5-Վ որոշմամբ ներկայացված հիմքերն ու հիմնավորումները չեն համապատասխանում արդեն հետազայում կայացված հմ. 23-Վ որոշման հիմքերին ու հիմնավորումներին, իսկ վերջին որոշմամբ որևէ նշում առկա չէ դրանց ոչ ամբողջական լինելու պատճառների մասին, ավելին, հմ. 5-Վ որոշման կապակցությամբ ներկայացված բացատրությունները Նախարարի կողմից գնահատվել են «անուղղակի» և փաստացի չեն դիտարկվել ներկայացված միջնորդության համատեքստում, իսկ Բարձրագույն դատական խորհրդին ուղարկված նյութերն ուղարկվել են հմ. 5-Վ որոշմանը համապատասխան ծավալով, ուստի ստեղծված որոշակիությունից զուրկ իրավիճակում նպասակահարմար են զտնում սույն պատասխանը ներկայացնել հիմք ընդունելով կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացած հաղորդման հիմքում դրված դատախազի զեկուցագիրը, նաև նույն պատասխանը հիմք ընդունելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին Նախարարի միջնորդությունը մերժելու համար:

Դասախազի գեկուցագրի հենց նկարագրական մասից ակնհայտ է, որ այն դասական ակսի թյուրըմբռնման հեժևանք է, քանզի հիմնված է սխալ ենթադրությունների վրա. Մասնավորապես նրանում նշված է, որ, «*Երևան քաղաքի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դասարանը (այսուհեժ նաև՝ Դասարան)*՝ դասավոր Արևուշ Զաբրիելյանի նախազահությունը, մերժել է ներկայացված միջնորդությունը՝ բերելով ակնհայտ անհիմն հիմնավորումներ, այն մասին, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից ներկայացված ժեղեկությունները բավարար չեն հավաստելու մեղադրյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը, նրա առնչությունը դեպքին»։ Այնինչ, Դասարանը երկու դեպքում էլ հիմնավոր կասկածի հարցին, այսինքն դրա առնվազն երեք տարրերին անդրադառնալիս, արձանագրել է, որ քրեական գործով ձեռքբերված և դասարան ներկայացված որոշակի նյութերով բացակայել են **ենթադրյալ արարքների առերևույթ հանրնկնումը քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմի հասկանիշներին**։ Այլ կերպ ասած, մեղադրանքի փաստական կողմին (ենթադրյալ հանցանքի դեպքին), դրան անձի առնչությանը և փաստական հանգամանքներին տրված քրեաիրավական գնահատականին անդրադառնալիս արձանագրել է դրանցից վերջինը։ Ավելին, երկու դեպքում էլ Դասարանը հմ.ԵԳ/0264/06/21 որոշումը կայացրել է վերաբերելի իրավանորմերի, Վեոաբեկ դասարանի որոշումների մեկնաբանությունների համատեղությամբ գործի փաստական հանգամանքների գնահատմամբ ձևավորված ներքին համոզմունքի հիման վրա, որոնցից շեղվելու հիմքեր չի տեսել։ (...)

Սույն վարույթին առնչվող գործով վերաքննիչ դասարանի որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դասախազի կողմից ներկայացված գեկուցագիրը նույնական է ներկայացված վերաքննիչ բողոքի հեժ, իսկ կարգապահական պատասխանատության ենթարկելու հիմքի հիմնական հիմնավորումը ՀՀ Վերաքննիչ դասարանի կողմից ներկայացված բողոքը մասնակիորեն բավարարելու և դասական ակսի բեկանելու հանգամանքն է, ինչը Նախարարը առանց որևէ պատճառաբանված հիմնավորման փորձել է հերքել իր հմ. 23-Ա որոշմամբ, որպեսզի բացառի «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման հնարավորությունը։ Սակայն վարույթի փաստական Տվյալներից, մասնավորապես, հաղորդում ներկայացնելու ժամանակից, դասախազի գեկուցագրում մեղադրյալի ազատության մեջ հայտնվելու և դրա հեժևանքների հատուկ շեշտադրումից, Նախարարի որոշումներում կալանավորման հիմքերին դասարանի կողմից չանդրադառնալու ընդգծված անդրադարձից, վերաքննիչ դասարանի որոշումը որպես հիմնավորում ներկայացնելուց, բխում է, որ կարգապահական վարույթի հարուցման հիմնական պատճառը մեղադրյալի ազատության մեջ հայտնվելու և հեժազայում նոր հանցանք կատարելու մեջ է կայացել (առավել մանրամասն դրան անդրադարձ է կատարվել բացատրությանը)։

Նաև արձանագրենք, որ կարգապահական վարույթ հարուցած մարմինը դասավորի կողմից ՀՀ Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի ենթադրյալ սխալ կիրառելիության և դասավարական նորմի ենթադրյալ խախտման վերաբերյալ պատճառաբանված հիմնավորումներ չի ներկայացրել և առաջնորդվել է բացառապես վերաքննիչ դասարանի կողմից կայացրած դասական ակսի

հիմնավորումներով: Չսնուն էմ, որ կարգապահական վարույթ հարուցած մարմինն իրավասու չէ օրենքների միասեակ կիրառության ապահովումը վերապահել այն դատական ասյանին, որը ՀՀ Սահմանադրությամբ օժտված չէ նաև լիազորությամբ և իրավասու չէ անսեսել այն դատական ասյանի իրավական դիրքորոշումները, որը ՀՀ Սահմանադրությամբ սրված լիազորությունների շրջանակում իրավասու է կայացնել որոշումներ ի ապահովումն օրենքների միասեսակ կիրառության: (...)

Քննարկվող գործով, ըստ նախաթննության մարմնի կողմից ներկայացված նյութերի, մեղադրյալ Լ.Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կեսով այն հանցավոր արարքի կատարման համար, որ նա ուրիշի գույքի գաղսնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, 2021թ. ապրիլի «09»-ին՝ ժամը «10:30»-ի սահմաններում գնացել է Երևան քաղաքի Գ.Լուսավորիչ 15 հասցե, մոտեցել է Գագիկ Գուրգենի Թովմասյանին պատկանող սրճեփ սարքին և իր մոտ եղած երկաթյա ամրանով փորձել է բացել պատեսարան հանդիսացող սրճեփ սարքի մեսադադրամների պահոցը և այնտեղից կատարել ուրիշի գույքի գաղսի չափերի գաղսնի հափշտակություն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել և չկարողանալով բացել այն՝ դիմել է փախուստի:

Սյսինքն, «գաղսի չափով» գույքի գաղսնի հափշտակության փորձ ենթադրաբար կատարելու արարքի նկարագրությունը և ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կեսով արարքի իրավական որակումը սրվել է հենց նախաթննության մարմնի կողմից, որի սահմաններում էլ Դատարանը կատարել է իր վերլուծությունը: Ընդ որում, այն իրականացրել է ոչ թե ենթադրած՝ նախկին խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի վկայակոչմամբ, այլ՝ գործողի: Մասնավորապես, ճիշտ չի ընկալվել Դատարանի ձևակերպումը, որը սրվել է հեսևյալ կերպ. «ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի դիտարկիցիայի համաձայն՝ գողության *հասարակ* ձևը գաղսի չափերով կատարված ուրիշի գույքի գաղսնի հափշտակությունն է», որը բխում է գործող քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասից: Ինչ վերաբերվում է վկայակոչված նորմի 5-րդ մասին, որին և հղում է կատարվել, որի ձևակերպումը սրված է հեսևյալ կերպ. «*Գողություն է համարվում ուրիշի գույքի գաղսնի հափշտակությունը*», ապա այն տալիս է գողության հանցակազմի բնութագիրը, որով վերջինս տարբերվում, սահմանագատվում է ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում ընդգրկված բովանդակությամբ համատեռ սեփականության դեմ ուղղված մյուս հանցագործությունները նախատեսող հոդվածներից՝ կողոպուտից, ավագակությունից, խարդախությունից, յուրացումից, վատնումից և այլ: Գատկանշական է ընդգծել, որ վկայակոչված իրավական նորմի 5-րդ մասն, ըստ իր կառուցվածքի, սանկցիա, այսինքն՝ պատիժ սահմանող մաս, չի պարունակում, ի տարբերություն նույն գլխում ընդգրկված մյուս հանցագործությունների, ինչպես օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ավագակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը*, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դատ գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է (...), ՀՀ քրեական օրենսգրքի 176-

րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողոպուտը՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը՝ պատժվում է (...)*, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը՝ պատժվում է (...)*, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը՝ պատժվում է (...)*, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրացնելը կամ վասնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով՝ պատժվում է (...)* և այլն: <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-3-րդ մասերի համաձայն՝ օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների շեքով: Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:

ՀՀ քրեական օրենսգրքի կառուցվածքային առանձնահատկությունից ելնելով, իրավական նորմի մասերը շարադրված են հիմնական հանցակազմից դեպի որակյալ հանցակազմ հերթականությամբ, այլ կերպ ասած, հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունն իր բնույթով և հանրային վստահությունը սաստիճանով ավելի թեթև է քան 2-րդ մասով նախատեսվածը, իսկ վերջինս ավելի թեթև է քան 3-րդ մասով նախատեսվածը և այսպես շարունակ:

Չեսևաբար Դասարանի կողմից դասական ակտում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ հեժուրությունը բխել է գործող օրենսգրքով սահմանված ձևակերպումից, այլ ոչ թե դրա նախորդ խմբագրության ձևակերպումից, ինչպես որ չնկնաբանված և չհիմնավորված կերպով պնդել է Նախարարը: Բացի այդ, Նախարարի կողմից անցեսվել են բացատրությամբ ներկայացված բոլոր հիմնավորումներն առ այն, թե ինչու է պայմանավորված եղել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածում կատարված փոփոխությունը, ունի է եղել նորմի 1-ին մասը 1.1 ենթակետի բաժանելու նպատակով և ի՞նչ օրենսդրական փոփոխությունների են ենթարկվել համանման իրավահարաբերությունները կարգավորող մյուս նորմերը: Եղան, որ նման օրենսդրական փոփոխությունը պայմանավորվել է անձանց մոտ զսնվող իրերի, կամ նրանց մոտ զսնվող, հազիմ կրած հագուստից, հագուստի գրպանից, պայուսակից կամ անձի մոտ զսնվող այլ առարկայից զաղտնի հափշտակություններ կատարելու արարքների աննախադեպ աճով, որոնք մինչև քրեաիրավական ոլորտում օրենսդրական փոփոխությունները կազմել են վարչաիրավական կարգավորման առարկա, սակայն օրենսդիրը գտել է, որ քրեաիրավական ոլորտի կարգավորման առարկա դարձնելով, պայթարը նմանափայ արարքների դեմ առավել արդյունավետ կլինի: Եվ պատահական չէ, որ միևնույն օրը՝ 14.11.2019թ. և՛ ՀՀ քրեական օրենսգրքում, և՛ ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում կատարվել են օրենսդրական փոփոխություններ. հմ.ՀՕ-218-Ն օրենքով փոփոխություն է կատարվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածում, այն է՝ 1-ին մասի առաջին

պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «1. Գողությունը, որը կասարվել է զգալի չափերով»։ 2) լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով. «1.1. Անձի մոտ զսնվող իրերի գողությունը, ինչպես նաև գողությունը, որը կասարվել է անձի մոտ զսնվող կամ նրա կրած հագուստից, այդ թվում՝ գրպանից, պայուսակից կամ անձի մոտ զսնվող այլ առարկայից՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատասխից հինգհարյուրապատասխի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»։ 3) լրացվել է հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով. «5. Գողություն է համարվում ուրիշի գույքի զաղսնի հափշտակությունը»։ Իսկ նույն օրվա հմ.ՅՕ-219-Ն օրենքով փոփոխություն է կասարվել ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում, այն է՝ 53-րդ հոդվածի 1-ին մասում «գողության», բառից հետո լրացվել է «եթե չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հասկանիշներ», բառերը։ Հավելեմ նաև, որ որևէ օրենսդրական փոփոխություններ չեն ունեցել ո՛չ ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գողության միջոցով հափշտակություն կասարելու մանր չափը սահմանող դրույթներում և ո՛չ էլ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ գողության միջոցով հափշտակություն կասարելու զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող դրույթներում։

Այսինքն, վերոգրյալների համատեքստում, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1.1-ին կետով չնախատեսված հասկանիշներով գողության **հասարակ** ձևը այնուամենայնիվ, զգալի չափերով կասարված ուրիշի գույքի զաղսնի հափշտակությունն է, ինչը որ արձանագրվել է Դատարանի կողմից, և ինչը ընդգրկված է եղել նաև մեղադրյալին վերագրված ենթադրյալ արարքի փաստական նկարագրության մեջ։ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասն արդեն նկարագրում է գողության հանցակազմը որակյալ դարձնող հասկանիշները, որի համար նախ պետք է առերևույթ առկա լինի հիմնական հանցակազմը, ինչը բխում է ՀՀ Վեճաբեկ դատարանի բազմաթիվ նախադեպային որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներից։ Եվ քանի որ վարույթ իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերում բացակայել են գողության միջոցով գույքի հափշտակության զգալի չափը հաստատող սվյալները, թեղեկությունները կամ ապացույցները, հետևաբար Դատարանը հանգել է այն հետևության, որ կասարված արարքում առերևույթ առկա են եղել զանցանքի հասկանիշները (սես՝ Սերգեյ Արթուրի Ավանեսյանի վերաբերյալ գործով ՀՀ Վեճաբեկ դատարանի 07.02.2019թ. հմ. ՍԳ1/0016/01/16 գործով որոշումը)։

Նախարարի հմ. 5-Վ որոշմամբ անդրադարձ է կասարվել նաև մեղադրյալին առաջադրված ենթադրյալ հանցանքի մյուս դրվագին, որը սակայն բացակայում է հմ. 23-Վ որոշման մեջ և բացակայում են այն չներառելու հիմքերն ու հիմնավորումներն, ուստի հարկ են համարում անդրադառնալ նաև դրան։ Այդ դրվագով արձանագրվել է, որ. «(...) դատարանը (...) իրեն չծանրաբեռնելու համար, ընդամենը նշել է, որ բացակայում է ենթադրյալ արարքի առերևույթ համընկնումը քրեական օրենսգրքի սահմանված հանցակազմի հասկանիշներին, այսինքն՝ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի



4-րդ կետով հիմնավոր կասկածը, անգամ մակերեսային որևէ ձևակերպմամբ չվկայակոչելով, թե հասկապես հանցակազմի, որ հասկանիշը նկարագրված չի եղել Լև Սահակյանի մեղադրանքի որոշման մեջ»: Սակայն, նման դիրքորոշումը կամայական մեկնաբանության արդյունք է, քանի որ Դատարանը դատական ակտում (սե՛ս 9-10-րդ էջերը) անդրադարձել է թե՛ արարքի փաստական նկարագրությանը, թե՛ վկայակոչել է արարքի իրավաբանական որակման օրենսդրական ձևակերպումը, թե՛ վկայակոչել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը, ընդ որում մեջբերելով ոչ թե ամբողջական դատական ակտը, այլ միայն դրա գործին վերաբերելի հասկածները և թե՛ արձանագրել է դրանց արդյունքում իր հետևությունները»:

Միաժամանակ Դատավորը իր պատասխանում նշել է, որ սույն վարույթի շրջանակում, Դատարանին նաև պահանջ է ներկայացվել առ այն, որ Դատարանն անգամ մակերեսային որևէ ձևակերպմամբ չի վկայակոչել, թե հասկապես հանցակազմի որ հասկանիշը նկարագրված չի եղել Լև Սահակյանի մեղադրանքի որոշման մեջ: Այդ մասով Դատավորը նշել է, որ մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կասարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ, առավել ևս վկայակոչելու, թե մեղադրանքի որոշման մեջ ինչպիսի հասկանիշներ նկարագրված չեն:

Վերոգրյալների հիման վրա Դատավորը զսնոել է, որ բացակայում են Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների խախտման հասկանիշները, դատական ակտը կայացնելիս Դատարանը ղեկավարվել է բացառապես արդար դատաբանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներն ապահովելու նկատմամբ չունենալով որևէ միտում հեղինակագրվել դատական իշխանությունը և վնասել արդարադատության շահը, թիվ ԵԴ/0264/06/21 դատական գործով Դատարանի հետևությունները բխել են բացառապես օրենսգրքերի համապատասխան նորմերից, վերաբերելի և կիրառելի նախադեպային իրավունքի մեկնաբանություններից և Դատարանն ըստ էության իրականացրել է օրենքի մեկնաբանություն, փաստերի և ապացույցների գնահատում, ուստի խնդրել է մերժել Նախարարի միջնորդությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

**4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

1. Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ալ. Դազարյանի կողմից թիվ 13131221 քրեական գործով ներկայացվել է միջնորդություն՝ մեղադրյալ Լև Սահակյանի (այսուհետ՝ նաև Մեղադրյալ) նկատմամբ կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու մասին:

2. Թիվ ԵԴ/0264/06/21 դատական գործով Դատարանը 30.04.2021 թվականին կայացրել է որոշում (այսուհետ նաև՝ Որոշում)՝ մեղադրյալ Լև

Սահակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

3. Դատարանը, Որոշման պատճառաբանական մասում անդրադառնալով Մեղադրյալի առերևույթ առնչությանը առաջադրված մեղադրանքին, արձանագրել է հետևյալը. «(...) Մույն գործով մեղադրյալին վերագրվող ենթադրյալ արարքի փաստական նկարագրության մեջ բացակայում են գույքի զաղտնի հափշտակությունը զգալի չափերով կասարելու (կասարելու փորձի) վերաբերյալ հիմնավորումները: Դատարանը գտնում է, որ թեև արարքի փաստական նկարագրության մեջ ձևականորեն նշվել է հանցագործության հասկանիչ հանդիսացող՝ «զգալի չափով» եզրույթը, սակայն դրա վերաբերյալ հիմնավորումների բացակայությունը Դատարանին թույլ են տալիս հանգելու այն հետևության, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից ներկայացված արարքի փաստական նկարագրությունն առերևույթ վկայում է անձի արարքում զանցանքի հասկանիչների առկայության մասին և դուրս է Դատարանի ընդարկման ոլորտից:

4. Վերաքննիչ քրեական դատարանի 18.06.2021 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մասնակի բավարարվել է, բեկանվել է Դատարանի Որոշումը և նյութերն ուղարկվել են նույն դատարան՝ նոր քննության:

### 5. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Տախարարի հաղորդումը, ինչպես նաև Տախարարի սեղակալի և ներկայացուցչի դիրքորոշումները, Դատավորի պատասխանը և գրությունը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Տախարարի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդն էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին՝

1. արդյո՞ք թիվ ԵԳ/0264/06/21 դատական գործով 2021 թվականի ապրիլի 30-ին կայացված որոշմամբ Դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի/նորմերի խախտում.
2. արդյո՞ք թիվ ԵԳ/0264/06/21 դատական գործով Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի/նորմերի խախտումը կասարվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի իմաստով դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կասարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դասավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դասավորի վարժապետի կանոնները խախտելը, որը կասարվել է դիտարկությանը կամ կոպիտ անփութությանը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում սվյալ դասավորի համապատասխանությունը դասավորի կարգավիճակին և իր էությանը չի կարող հեղինակագրվել դասական իշխանությունը:

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ արարքը համարվում է դիտարկությանը կասարված, եթե դասավորը գիտակցել է իր վարժապետի ոչ իրավաչափ բնույթը, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է կոպիտ անփութությանը կասարված, եթե դասավորը չի գիտակցել իր վարժապետի ոչ իրավաչափ բնույթը, թեև սվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել հետևյալը՝

1. դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցանքի կազմն ունի ոչ միայն ձևական, այլև նյութական բաղադրիչ.

2. դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցանքի կազմի նյութական բաղադրիչը պայմանավորված է խախտման կարևորության աստիճանով.

3. դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցանքի կազմի նյութական բաղադրիչը՝ խախտման կարևորության աստիճանը, որպես հետևանք, պետք է կասկածի տակ դնի դասավորի համապատասխանությունն իր կարգավիճակին և հեղինակագրվի դասական իշխանությունը:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով դասավորի անկախության սահմանադրական և միջազգային իրավական պահանջները, այդ համատեքստում դասավորի կողմից թույլ տրված անձի իրավունքի խախտման ու դրանով պայմանավորված կարգապահական պատասխանատվության ենթարկելու առկայության կամ բացակայության իրավական հիմքը գնահատելու համար որոշիչ նշանակություն է ձեռք բերում նրա կողմից թույլ տրված իրավունքի խախտման կարևորության աստիճանը, դասավորի սուբյեկտիվ վերաբերմունքը խախտման նկատմամբ և խախտման հնարավոր և փաստացի հետևանքների ծանրությունը մարդու իրավունքների, սվյալ դեպքում՝ անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի ապահովման շեղանկյունից:

«Հայաստանի Հանրապետության բրեական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կասարվելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 14-ին ընդունված և 2019 թվականի դեպտեմբերի 9-ին ուժի մեջ մտած թիվ 30-218-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ բրեական օրենսգրքի 177-րդ հոդվածում կասարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

«1) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությանը.

«1. Գողությունը, որը կասարվել է զգալի չափերով».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Անձի մոտ զսնվող իրերի գողությունը, ինչպես նաև գողությունը, որը կասարվել է անձի մոտ զսնվող կամ նրա կրած հագուստից, այդ թվում՝ զրպանից, պայուսակից կամ անձի մոտ զսնվող այլ առարկայից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատասխիկից հինգհարյուրապատասխիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Գողություն է համարվում ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը:»:

Գործող Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *գողությունը, որը կասարվել է՝ պահեստարան կամ շինություն սպորիինի մոտ զործելով՝* պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատասխիկից հազարապատասխիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ գողության հասկացությունը, այսինքն՝ հիմնական հանցակազմը, սահմանված է գործող խմբագրությամբ Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 5-րդ մասով, մասնավորապես՝ *գողություն է համարվում ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը*, իսկ նախկին՝ մինչև 14.12.2019 թվականը գործող խմբագրությամբ գողության հասկացությունը՝ հիմնական հանցակազմը, սրված էր 177-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որի՝ *գողություն էր համարվում ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունը*: Կասարված փոփոխությունների արդյունքում, գողությունը, որը կասարվել է պահեստարան կամ շինություն սպորիինի մոտ զործելով որպես հանցագործության հասկանիշ չի ներառում «զգալի չափը»: Ի տարբերություն սեփականության դեմ ուղղված հանցագործությունների մյուս տեսակների, գողության հասկացությունն օրենսդիրը սահմանել է հոդվածի առանձին՝ 5-րդ մասով, առանց սանկցիա՝ պատժաչափ սահմանելու:

Սույն կարգապահական վարութի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թիվ ԵԴ/0264/06/21 դասական գործով Դատարանի 30.04.2021 թվականին կայացված Որոշմամբ մեղադրյալ Լև Սահակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին մերժվել է: Դատարանը, Որոշման պատճառաբանական մասում անդրադառնալով Սեղադրյալի առերևույթ առնչությանը առաջադրված մեղադրանքին՝ արձանագրել է հետևյալը. «(...) Սույն գործով մեղադրյալին վերագրվող ենթադրյալ արարքի փաստական նկարագրության մեջ բացակայում են գույքի գաղտնի հափշտակությունը զգալի չափերով կասարելու (կասարելու փորձի) վերաբերյալ հիմնավորումները: Դատարանը զսնում է, որ թեև արարքի փաստական նկարագրության մեջ ձևականորեն նշվել է հանցագործության հասկանիշ հանդիսացող՝ «զգալի չափով» եզրույթը, սակայն դրա վերաբերյալ հիմնավորումների բացակայությունը Դատարանին թույլ են տալիս հանգելու այն հետևության, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից ներկայացված արարքի փաստական նկարագրությունն առերևույթ վկայում է անձի արարքում զանցանքի հասկանիշների առկայության մասին և դուրս է Դատարանի ընտանքից:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 14-ին ընդունված օրենքի համաձայն արարքը Քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակելու համար «զգալի չափ» եզրույթ օրենսդիրը չի նախատեսել: Ենթացում փոփոխությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հափշտակության համար քրեական օրենքով սահմանված պատասխանատվությունը տարբերակվում է ըստ արարքի կատարման եղանակի: Հանցագործությունների որակման ժամկետներից հիմնական հանցակազմի նշանակությունն այն է, որ դրա հասկանիչներն ընդգրկվում են հանցակազմի բոլոր դրսևորումների մեջ: Այդուհանդերձ հարկ է նկատել, որ գողության որոշ ծանրացնող հանգամանքներ օժտված են հանրային բարձր վստահություն: Մինչդեռ, ակնհայտ է, որ գողությունը, որը կատարվել է՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով, օժտված է հանրային բարձր վստահություն, որից ելնելով էլ նշվածի առնչությամբ առավել կոշտ մոտեցում է դրսևորված Քրեական օրենսգրքում, ըստ որի՝ արարքը հափշտակության որևէ ժամկետով որակելու համար հափշտակած գույքի չափը պարտադիր հասկանիչ չէ:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ Դատարանը, ըստ էության, ղեկավարվել է մինչև 2019 թվականի նոյեմբերի 14-ը գործող քրեական օրենսգրքով և դրա համատեքստում՝ հանգել այն հետևության, որ մեղադրյալին վերագրվող ենթադրյալ արարքի փաստական նկարագրության մեջ բացակայում են գույքի գաղտնի հափշտակությունը **զգալի չափերով** կատարելու /կատարելու փորձի/ վերաբերյալ հիմնավորումները և գտել, որ արարքի փաստական նկարագրության մեջ ձևականորեն նշվել է հանցագործության հասկանիչ հանդիսացող զգալի չափով եզրույթը: Մինչդեռ, արարքը Քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակելու համար, սվյալ դեպքում «զգալի չափ» եզրույթ օրենսդիրը չի նախատեսել:

Վերոգրյալի համատեքստում Բարձրագույն դասական խորհուրդը գտնում է, որ թիվ ԵԴ/0264/06/21 դասական գործով Դատարանը, 30.04.2021 թվականին կայացված Որոշմամբ մեղադրյալ Լև Սահակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժելով, թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, ինչի արդյունքում Դատարանը հանգել է սխալ եզրակացության, որ Լև Սահակյանի արարքում բացակայում է հիմնավոր կասկածը և դրա արդյունքում չի անդրադարձել կալանավորման հիմքերին:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի տրամաբանությունից բխում է, որ օրենսդիրը կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման վարքագծի առումով առանձնացվել են մեղքի դրսևորման երկու ձևեր՝ դիտարկություն և կոպիտ անփութություն:

Բարձրագույն դասական խորհուրդն հարկ է համարում նշել, որ դատավորի կարգապահական պատասխանատվության ժամկետներից մեկը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի նկատմամբ:

Բարձրագույն դասական խորհուրդը զսնույմ է, որ Դասավորի կողմից թույլ տրված դասավարական իրավունքի նորմի խախտումները կատարվել են «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի իմաստով կոպիտ անփութություն, քանի որ Դասավորը չի գիտակցել իր վարձագծի ոչ իրավաչափ բնույթը:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրույմ է, որ դասավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դասական խորհուրդը հաշվի է առնույմ խախտման բնույթը և հետևանքները, դիտարկությունը կամ կոպիտ անփութությունը, դասավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Բարձրագույն դասական խորհուրդը Դասավորի նկատմամբ կարգապահական տույժի տեսակն ընտրելիս հաշվի է առել այն հանգամանքը, որ Դասավորի աշխատանքային գերծանրաբեռնվածությունը հանգեցրել է նրան, որ հստակ չի վերլուծել նախկին և գործող իրավակարգավորումները:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրույմ է նաև, որ կարգապահական պատասխանատվության հարցի թնկության պահին Դասավորը չի ունեցել կարգապահական տույժ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ՔՀայաստանի Հանրապետության դասական օրենսգիրքի սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դասական խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վրդարադատության նախարարի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի դասավոր Վրտուշ Գաբրիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Երևան քաղաքի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի դասավոր Վրտուշ Գաբրիելյանին հայտարարել նախազգուշացույմ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնույմ հրապարակման պահից և վերջնական է:

*ԲՎՐԶՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՐԴԻ ՆԱԽԱՐԱՐԻ*

*ՊՎՇՏՈՆԱԿԱՆԱԿ*

*ՎՆԴԱՄՆԵՐ`*

*Գ. ԶԳՎԱԳԻՐՅԱՆ*

*Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ*

*Դ. ԽՎՉԱՏՈՒՐՅԱՆ*

*Մ. ՄՎԿՅԱՆ*

*Լ. ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ*

ԴԵՍ

---

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

---

Ա. ՄԽԻԹՅԱՆ

---

Ս. ՉԻՉՈՅԱՆ

---

Վ. ՔՈՉՅԱՆ

---